ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՎԸ

(Վիլնյուս—Լենինգրադ)

Մարդու իրավունքների միջազգային երկրորդ խորհրդաժողովը ամբողջ համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրում է Լեռնային Ղարաբաղում (Արցախում) մարդու իրավունքների կոպիտ ու մշտատև խախտման վրա:

1988 թվականի փետրվարին սկսելով Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ժխտումից, ԽՍՀՄ ղեկավարությունը և նրան ենթարկվող Ադրբեջանի խամաճիկային կառավարությունը բանը հասցրին Արցախի ժողովրդի դեմ հանցավոր չհայտարարված պատերազմի, որն իր դաժանությամբ ու ենթգությամբ համեմատելի է նացիստական ցեղասպանության հետ:

Արցախի ժողովրդին սպառնում է ֆիզիկական բնաջնջում կամ լավագույն դեպքում զանգվածային արտաքսում, ըստ որում, առանձին բնակավայրերի բնակչության արտաքսման դեպքեր արդեն եղել են և հիմա էլ շարունակվում են:

Խորհրդաժողովը նշում է, որ հոգնարք ապրող կայսրության ներկա ագրեսիան իր մասերից մեկի դեմ այլ հանգամանքներում կարող է նաև դեպի դուրս ուղղվել, ուստի և վտանգ է ներկայացնում ամբողջ համաշխարհային հանրության համար:

Խորհրդաժողովը ժողովրդավարական երկրների կառավարություններին, միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին կոչ է անում ԽՍՀՄ-ի ղեկավարությունից պահանջել դադարեցնել համաժողովրդական ահաբեկչությունը Լեռնային Ղարաբաղում, վերականգնել օրինական իշխանության ջախջախված մարմինները, երկրամասի ժողովրդի համար ապահովել միջազգային իրավական ակտերով ընդունված ինքնորոշման իրավունքը:

4 սեպտեմբերի 1990 թ.
Լենինգրադ